

Կ ո տ ո Ր Վ ա ծ ն Ե Ր Ի Թ Ի ւ ւ ր

Ռուսաց գործակալութեանը լուսաբանող հեռագրում են նույնքանի 3-ից, «Կ. Պոլսից» «Daily News» լրագրի ստացած տեղեկութիւններից երկուսն են, որ կերտուածի մասերը կարահասարակ ինքնաշարժի մէջ գտնուող ամբողջ տարածութիւնը քար ու քանդ են արել քիւրդերը: Վերջին ընդհանրական ժամանակ կոտորվածների թիւը հասնում է մօտ 15,000 հոգու: Այն կարծիքը կայ, թէ առաջիկայ վեց ամիսների ընթացքում սովորական կ'ընկնէ մօտ 30,000 հոգի:

Ն ո Ր Կ ո տ ո Ր ա ծ

«Новое Время» լրագիրը, արտասահմանեան թերթերից վերցնելով, հաղորդում է, որ փոքր-Ասիայում տեղի են ունեցել նոր գաղանթիւններ: Արգելում և Պաշտօն կոտորվել են աւելի քան հազար մարդ:

Ա մ Ե Ր Ի Կ ա կ ա ն մ Ի ս Ի օ ն Ե Ր ն Ե Ր

Ամերիկական դեսպան Տերերը յայտնել է մեծ վիզիթին, որ պէտք է եռամսհուն միջոցներ ձեռք առնվին ամերիկական միաօնները իրանց պաշտպանելու համար: Միաօնները իրանց կողմից հրաւեր են կարգում ամերիկացիներին պաշտպանել նրանց և քրիստոնեաներին: Աւելի քան 250,000 հայ գտնվում են մեծ չքաւորութեան և վերջին կարօտութեան մէջ:

Կ ո տ ո Ր ա ծ ն Ե Ր ւ ր

«Daily News» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հեռագրում է նույնքանի 8-ից:

Հաստատված է, որ Գիւրբաբեկիւնում հինգ հազարից աւելի մարդ է սպանված: Պրանսիական հիւպատոսը հեռագրել է, որ ինքն և ուրիշ ֆրանսիական հպատակներ վտանգի մէջ են:

Մասնաւոր նամակները և տեղեկութիւնները հաստատում են, որ ամբողջ Հայաստանում, գիւղերի մէջ տեղի են ունեցել յարձակումներ հայերի վրա: Հարիւրաւոր մարդիկ փախել են երկրից դուրս և կոտորածից ազատ մնացողները կրել են սարսափելի տանջանքներ:

Դ Ա Ս Ս Ի Ս Ս Ո Ւ Ռ Ի Ն Վ Ի Կ Ե Ն Ա Տ Ո Ւ Մ

Մի հայ օրիորդ, Մարգարիտ Մէլքե-Բէգլարեան (կարծում ենք չուշեցի), որը իր ուսումը կատարելագործելու համար ահա մի քանի տարի դըմարդում է Եւրոպայում և աւարտելով ուսումը, ստացել է դ. օ. կ. տ. օ. ր. աստիճան, վերջերս Վիէնայում կարգացել է մի դասախօսութիւն, որի մասին լուսնուի «Daily News» լրագրի թղթակիցը հետեւեալն է ասում:

«Օրիորդ Բէգլարեան, երիտասարդ հայուհի զօկուոր, որի պատմութիւնը Վիէնայի մեր թղթակիցը տուեց մեր լրագրի վերջին համարներից մէկում, կարգացել է այդ քաղաքում մի զատաշատութիւն կանանց բարձր կրթութեան հարցով հետաքրքրվող ունկնդիրների առաջ: Դասախօսութեան նիւթն էր «Հայաստանի կանայք և նրանց մասնատակաւ ընդերքը»:

«Վիէնայի մեր սեփական թղթակիցը հեռագրում է մեզ, որ օրիորդ Մարգարիտ Բէգլարեան չը վարանեց հակառակել պրօֆեսոր Ալեքսիսի այն կարծիքին, թէ հայ կանայք ստոր ընդունակութեան տէր են: Նա սակայն, որ ամեն մի հայ, երբ իր չորս կողմն է նայում, չէ կարող աւելի, թէ իր բոլոր տեսածը տղամարդի ձեռքի գործըն է և ոչ կնոջ: Արդիւնաբերութեան այն բոլոր արտադրութիւնները, որոնցով հուշակված է երկրը, ինչպէս մետաքս, բամբակե գործածանք, կարպասներ և ասեղնազարդեր, այդ բոլորը Հայաստանում գործում է կինը, մշակելով հում նիւթերը: Ոչ մի տղամարդ չէ կամենում մասնակցութիւն ունենալ այդ գործի մէջ և ամբողջովին թողնում է կանանց վրա, իբրև մի ստոր աշխատութիւն: Հայաստանի մէջ մի ասացուած կայ, որ լաւ ընտրուած է ընակիչներին: Հայերն ասում են՝ «Թող մեր կանայք սովորեն ինչ որ կարող են, նրանք աւելի շատ օգտուէտ կը լինեն և մենք մեծ հաճութեամբ կ'ամուսնանանք նրանց հետ»:

«Գօկտոր Մարգարիտ Բէգլարեան յայտնեց ապա, թէ այժմ, երբ Պետերբուրգում կանայք պէտք է ընդունվին համալսարանում, հարիւրաւոր ընտանիքներ, որոնց աղջիկները աւարտել են Թիֆլիսի գիմնազիաներում և ստորին դասընթացներում, յայտնել են, թէ կուղարկեն իրանց աղջիկներին բժշկութիւն սովորելու, ի նկատի ունենալով, որ բժիշկների սով է Հայաստանում»:

Ն Ե Ր Ի Ն Տ Ե Ս Ո Ւ Ռ Ի Ն

Ա Ն Կ Ա Ր Գ Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր Բ Ո Ւ Թ Ա Յ Ի Մ Բ Ա Ղ Ա Ք Ո Ւ Մ

Հոկտեմբերի 14-ին, 1895 թ. Երեկոյան, Քուրթալիի դատարի Մարգարիտի գիւղի ընակիչները, երեք տղամարդ և չորս կին, Մօցամէտեան վանքից հրէաների թաղով Քուրթալիի վերադառնալիս, նախքան այդտեղ մանուկներից և հասակաւ առած տղամարդկանցից և կանանցից բաղկացած հրէաների մի խումբ, որը ծաղրում էր մի կիսա-խեղաքար իմէրէլ աղջկան: Անորդները սկսեցին պաշտպանել նրան: Այդ պատճառով կոխ ըսկալեց քրիստոնեաների և հրէաների մէջ: Հրէաները սկսեցին քարեր քցել քրիստոնեաների վրա:

Իմէրէլներից մէկը, Լուկա Կոստաւա անունով, իրան պաշտպանելու համար մերկացրեց զայն, բայց հրէաների յարձակումից նեղվելով, ստիպված էր փախչել և ընկնել Ռիօն գետը: Հասնելով գետի մէջ գտնված մի կղզու և տեսնելով, որ հրէաները շարունակում են հաւածել իրան, նա չորերը հանեց, ընկաւ Ռիօն գետի գլխաւոր թեր, և կամենում էր լողալով անցնել գետի միւս ափը, բայց նրա ետեւից գցող քարերից մէկը դիպաւ նրա գլխին: Ուշաթափվելով, նա խեղդվեց, և նրա դիակը գետ մինչև այժմ չէ գտնված: Ոստիկանութիւնն իսկույն գալով, նոյն երեկոյան և եթ ձերբակալեց այդ գործում յանցաւոր եօթ զլխաւոր հրէաներին:

«Կատաղած հրէաների այդ արարքով, Քուրթալիի իմէրէլները հոկտեմբերի 16-ին, առաւօտեան, բազում ծեծեցին մի քանի հրէաներին: Որպէս զի անկարգութիւնները չը կրկնվին, պօլիցիական պահակախմբերը զրկեցին զլխաւոր փողոցներում, և դրանց օգնելու համար նշանակվեցին քսան կողակներ մի օֆիցերով: Այդ ոյժը չուտով անբաւարար եղաւ, որովհետև արհեստաւորներից, մանրավաճառներից և հոգևոր, քաղաքային և այլ դպրոցների աշակերտներից բաղկացած ամբողջ քնալով աճում էր, այդ ամբողին միացան և զինուորագրական վիճակահանութեան համար Քուրթալիի եկած 400 զինուորայինները կարգադրելով հեռացնել հրէաներին բազմաթիւ յորդորելով ամբողին չը յարձակվել հրէաների խանութներին և տներին վրա, հրաւիրվեց էլի մի վաշտ զօրք: Երեկոյան 4 ժամին ամբողը աշխատում էր հրէական թաղը մտնել, բայց չափողվեց նրան: Սակայն շատերը, խուլ փողոցներով, կարողացան մտնել հրէական թաղի վերին մասը և սկսեցին քարերով ջարդել հրէաների տները և սկսեցին քարերով ջարդել հրէաների տները պատուհանները: Պօլիցիականներին, կողակների հետ միասին, չուտով աջողվեց քչել հրէաների թաղից այդ մարդկանցը: Ամբողը խաղաղացնելու համար ստիպվեցին զինուորական ոյժը աւելացնել էլի մի քանի վաշտերով: Երեկոյան 9 ժամին հրապարակները և փողոցները մաքրվեցին ժողովրդից համարեա առանց զինադրութեան: Գիշերը հանգիստ անցաւ:

Հոկտեմբերի 16-ին և 17-ին, առաւօտեան, իմէրէլները կրկին սկսեցին գնալ դէպի հրէական թաղը: Ամբողը, կամենալով մտնել հրէաների թաղը, քարեր էր արձակում, որոնք դիպչում էին զինուորայիններին և պօլիցիականներին: Զօրքերի եռանդոտ և մի և նոյն ժամանակ զգուշ գործողութիւնները, Քուրթալիի նահանգապետի յորդորները և մի քանի հրէաների ձերբակալումը աղբեցին ամբողի վրա և չուտով հրապարակները և փողոցները մաքրվեցին ժողովրդից: Կարգը և հանգստութիւնը մինչև այժմ ևս պահպանվում են, և հրէաները կարողանում են այժմ դուրս գալ իրանց տներին և զբաղվել իրանց առևտրով:

«Նոյեմբերի 16-ին և 17-ին, անկարգութիւնների ժամանակ, քարերով վիրաւորվեցին՝ փոխգնդապետ Դաւիթովիկի, պօզուորական Բարինտին, ինն զինուորային և եօթը կողակներ: Նոյն պէս վիրաւորվեցին մի քանի ոստիկաններ: Ամբողից նոյնպէս թնթիւ կերպով վիրաւորվեցին մի քանիսները»:

«Кавказъ»

Ն Ա Մ Ա Կ Ե Ր Ե Ն Ի Ն

Հոկտեմբերի 27-ին թեմական դպրոցը փոքր առ փոքր կարգի է բերվում: Բացի այն, որ հոգ է տարվում արտաքինի վրա, հօգացվում է նաև ներքինը: Վերա-

կացունների թիւը աւելացրել են: Որովհետ է, որ իւրաքանչիւր դաստիարակ գտնէ ամբող մի անգամ այցելի իր աշակերտների տունը, հետաքրքրվի նրանց նիւստ ու կացով, ընտանեկան պայմաններով, աշակերտի տան մէջ ունեցած վարք ու բարքով և պարագմունքներով, այս բոլորը, ի հարկէ, կունենայ իր բարեբար աղեկցութիւնը: Հաւանակ վարչութեան դիմումները՝ համալսարանական ուսուցիչ չը գտնվեց և ստիպված եղան եղած դասերը բաժանել ուսուցիչների մէջ, ինչպէս որ պատահեց: Այս տարի թեմական դպրոցում ընդունվեցին 10—15 աշակերտներ, որոնք եկել էին ձեռնարանից և Շուշու թեմական դպրոցից:

Գալեանեան օրիորդաց դպրոցը խառն դրութեան մէջ է, աւագ վարժուհին միջին կէս է լինում մի օրիորդի ձեռքից առնել թուաբանութեան դասերը, օրիորդն էլ աշխատում է չը թողնել դասերը: Հոգաբարձութիւնն էլ չէ իմանում ինչ անի, մի կողմից Վահագնի Գրամանն է անփութիւն թողնել խումբը, միւս կողմից մի և նոյն դասերի համար սահ երկու երեք շաբաթ է երկու օրիորդներ են դպրոց յաճախում: Այդ դպրոցին կից բացվել էր կար ու ձկն բաժանմունք: Տարաբախտաբար, հրաւիրված վարժուհին վախճանվեց:

Ս. Զօրաւոր եկեղեցու անունով օրիորդաց դպրոցը բացվեց և աշակերտութիւնների թիւը հասել է արդէն 30-ի:

Կ. Պոլսի և Տրապիզոնի կոտորածները սաստիկ յուզել են մանուկները մեր հարուստ վաճառականներին, այնպէս որ, երբ Բարեգործական ընկերութեան վարչութիւնը դիմեց մի քանիսին և առաջարկեց անգամակցական տոմսակ՝ մէկը հրաժարվեց պատճառ բերելով տխուր բոլորները, միւսը հրաժարվեց, որովհետև անցնալու տուել է, իսկ երրորդը խոստանում էր տալ յաջորդ տարին՝ թէկուզ տուկոսով: Տեսնում էք երեսնից վաճառականի սիրտը, զգացմունքը: Արդեօք սա կատակ չէ:

Անցանկերում Զօրաւոր եկեղեցու ծխականների ժողով կար, որտեղ պիտի ընտրէին մի քանիս, ինչ էր կարծում, մի տգէտ սարկաւագ ստացաւ 36 ձայն, իսկ մի ուրիշը, որը եղել է ձեռնարանում, աւարտել է Ներսիսիան դպրոցը ու երկար տարի պարապել է ուսուցչութեամբ՝ ստացաւ 30 ձայն: Եւ այս տխուր փաստը, որը մօթ է բերում մտքով Ներսիսին, մանաւանդ Զօրաւոր ծխականների, պիտի արձանագրվի և ուղարկվի սինօդին: Հետաքրքիր է թէ սինօդը ինչպէս կը վարվի այս խնդրի հետ:

Թեմական տեսուչ դեռ ևս չէ նշանակվել: Թէ և մի անգամ Տէր-Մովսէսեան Մեսրոպ վարդապետի մասին լուր տարածվեց, բայց չը հաղկեց: Մինչև այսօր էլ շատ դպրոցներում ուսուցիչ չը կայ և շատ ուսուցիչներ կան, որ տեղ չունեն:

Ա—Գօ

Ն Ա Մ Ա Կ Ե Ր Ե Ն Ի Ն

Նոյեմբերի 1-ին «Մշակի» անցեալ համարներից մէկում, Արցախեցին մեծ զարմանք է յայտնում Սաթուհեան վարդապետի անտարբեր ընթացքի առիթով, թեմական դպրոցի հոգաբարձական ընտրութիւնների վերաբերմամբ: Մեզ բողոքովին անտեղի է թըւում Արցախեցու զարմանքը, քանի որ Սաթուհեան վարդապետը չըբացատրված է այն տեսակ մարդկանցով, որոնց մտքերի ամենաբարձր արտադրութիւնն էր՝ տիրացուարանի բացումը:

Մինչդեռ ամբողջ Վարդապետը հեծում է տգէտ հոգեբանականների ձեռքում, մինչդեռ թեմական դպրոցն աւարտածներից շատերը հեռուից սպասում են այդ տգէտների արշաւանքի վախճանին՝ որպէս զի իրանք մտնեն ժողովրդի հոգևոր դաստիարակութեան բարձր պաշտօնի մէջ, ահա հէնց այդ ժամանակ բացվում է մի տիւրացուական, մօտ 30 անչափ տգէտ տիրացուների համար, տիրացուներ, որոնց ամենաբարձր գիտութիւնը դեռ 3 տարեց յետոյ պիտի հասնի բաղձապատկան աղեկականի, և որոնցից շատերը պատրաստվում են քահանայ ձեռնադրվել այն տեսակ գիւղերի վրա, որոնց մէջ արդէն կան 6—7 տէր-տէրներ:

Մօտ օրերս մի քարովեցի երիտասարդ, Ներսիսեան դպրոցն աւարտած, առաջարկութիւն արաւ քահանայ ձեռնադրվել, բայց նրան էլ հրամայեցին մտնել տիրացուարան: O tempora, o mores.

Ս. Դ. հասարակութեան մի քանի չըբաններում մտաւորութիւն կայ դիմելու կաթողիկոսին և խնդրելու, որ մեր թեմի առաջնորդ նշանակէ խորէն եպիսկ. Ստեփանէին:

Կ—Խանյ

Ն Ա Մ Ա Կ Ե Ր Ե Ն Ի Ն

Հոկտեմբերի 29-ին Այսօր օրիորդական դպրոցի դասիճում կայացաւ, երկրորդ հրաւերով, Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի ընդհանուր ժողովը: Ներկայ էին 30 հոգի միայն Ժողովի նախագահ ընտրվեց Ա. Ոսկանեանը, իսկ քարտուղար՝ Ն. Անտրոնեանը:

Ժողովի զբաղմունքի աւարտանք էին՝ 1) նախաձեռն ընտրվեցին, 2) վարչութեան երեք նոր անդամներ, երեք փոխ-անդամների և վերաստուգող մասնագործի երեք անդամների ընտրութիւնը: Նախ քարտուղարը կարգաց նախաձեռն, որը ընդունվեց մի քանի փոփոխութիւններով: Անդամներից շատերը ցանկութիւն յայտնեցին լաւ գրասպան ունենալու, միջնակարգ կրթութեամբ, որպէս զի կարողանայ նպաստել ընթերցանութեան տարածմանը: Որոշեցին տալ այդպիսի գրադարանապետին 300 ռուբլի ուժիկ, և այդ պատճառով նախաձեռն մուտքին աւելացրին 125 ռ., որը պէտք է վարչութեան անդամները լրացնեն ներկայացում տալով կամ մասնաւոր նուէրներով: Նախաձեռն մէջ մի քան միայն շատ վատ էր, այն, որ 1218 ռ. 38 կ. ընդհանուր մուտքից՝ տառապեալներին օգնելու համար, վարչութիւնը միմիայն 70 ռուբլի էր նշանակել, մինչդեռ խեղճերն օգնելը Բարեգործական ընկերութեան հէնց առաջին պարտականութիւնը պէտք է լինի, մասնաւոր որ դրանց թիւը Նուսում շատ չափ է: Նոյն իսկ ներկայումս 6 անգամից բաղկացած մի սասունցի ընտանիք ահա մի ամիս է ինչ աչտեղ է ու դիմել է Բարեգործական ընկերութեան վարչութեանը, բայց դեռ ևս ոչ մի օգնութիւն չէ տրվել այդ թշուառներին:

Նախաձեռն ընտրութիւնից յետոյ ժողովը ձեռնարկեց ընտրութիւններին: Վարչութեան անդամների ընտրութիւնը կատարվեց երկու անգամ, որովհետև առաջին անգամ ձայները բաժանվեցին և ոչ ոք չը ստացաւ ձայների 2/3 մասը, ինչպէս պահանջում է կանոնադրութիւնը: Երկրորդ անգամ ձայների առաւելութեամբ ընտրվեցին՝ Թ. Քուրթալի, Ս. Մանուկեան և Ն. Անտրոնեան: Փոխ-անդամների ընտրութիւնը առաջին անգամ կատարվեց նմանապէս անաշուղ, բայց որովհետև ժողովը բաւականին երկար տևեց և անդամներից մի քանիսը հեռացան ժողովի դահլիճից, այդ պատճառով նախագահը լաւ համարեց ժողովի շարունակութիւնը յետաձգել մինչև միւս կիրակի: Ընտրութիւնները այնքան էլ աջող չէ կարելի համարել:

Աւելորդ չենք համարում հաղորդել, որ նախ քան Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը՝ նոյն դահլիճում նշանակված էր ծնողական Ժողով: Այդ ժողովին, բացի ծնողներից, ներկայ էին և աշակերտները ու աշակերտուհիները, որոնց ներկայութեամբ աւագ ուսուցիչը կարգաց ուսուցչական խմբի կազմած կանոնադրութիւնը և մի քանի խօսքով հասկացրեց ծնողներին, որ ցանկալի կարգապահութեան հասնելու համար, նրանց արագաւ պարտականութիւնը պէտք է լինի իրանց որդիքը սրբութեամբ կատարել տալ տանը կանոնադրութեան ամեն մի կէտը: Հետեւեալ ծնողական ժողովը կայանալու է գալ կիրակի:

Ա. Մ.

Ն Ա Մ Ա Կ Ե Ր Ե Ն Ի Ն

Գահիրէ, հոկտեմբերի 19/31-ին «Մշակի» 111-րդ համարի մէջ հաղորդված էր, որ Թուրքիոյ հայ հասարակութիւնը դիտաւորութիւն ունի Սուրբատ արքեպիսկոպոս Պարգեանցի տեղ առաջնորդ խնդրել: Արաբներ առաջնորդ խնդրի եպիսկոպոս Ապահունին:

Կը փութած յայտնել, որ խնդրի եպիսկոպոս Ապահունին դեռ ևս հրաժարած չէ Արաբիէի առաջնորդութիւնէն, և քաղաքի բոլոր եկեղեցիներում մէջ մինչև ցարդ կը յիշվի անոր անունը: Ուրեմն, ապահովապէս թաւրիցիների խնդրեքը կը մերժուի մեր առաջնորդի կողմէն, որովհետև ժողովուրդը և առաջնորդը զերմ կերպով կը սի-

շուարում է և չը գիտէ ինչպիսի քաղաքներ
անի, որտեղից սկսի և ուր վերջանայ:

Վ—ցի

„ՄՇԱԿԻ“ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՐՈՒԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 8 նոյեմբեր: Բիւլլետեն նոյեմբերի
7-ից, թագուհի Կատարինայի Ալեքսանդրա Ֆեոդորովնայի
և Բարձր Նորաձինը գիշերը գեղեցիկ անց-
կացրին: Նորին Մեծութեան և Նորին Բարձրու-
թեան առողջութեան մէջ բնականօրէն որ և է
չեղանակներ չեն նկատուում:

Հրատարակված է ֆինանսների մինիստրի կար-
գադրութիւնը, որով իսկ է տրվում պարսկական
արդիւնքների տարանջատային փոխադրութիւնը Վը-
լադիկականական և Երկաթուղով Պետրովկից, Նո-
վորոսիսկի և Տաղանթի վրայով, դէպի արե-
մտեան Եւրոպա, առանց մարտ առնելու:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 9 նոյեմբեր: Բիւլլետեն նոյեմ-
բերի 8-ից, թագուհի Կատարինայի ամբողջ գիշերը
հանդիսա ընի մէջ անցկացրին: Ինքնազգացումը
և առողջութիւնը կատարելապէս բնական են:
Բարձր Նորաձինի անունը և զարգացումը կատարե-
լապէս կանոնաւոր են ընթանում:

ՍՊԵՏԻԱ, 9 նոյեմբեր: Թագուհի Կայսրը բա-
րեհաճեց շատ ողորմած կերպով պատասխանել
կորուրեան պրինց Ֆեդրինանդի շնորհաւորական
հեռագրին: Մեծ Խիստանի Սլաւ Նիւլանով-
նայի ծննդեան առիթով:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ՊԵՏԵՐԲՈՐԳ, Նիւ. Սպի. Ռուսիայի Կայսրը կը
տպանի, եթէ հնար լինի: Բարեհաճեց որ ուղար-
կել զազականական վերաբերեալ յոգուածը:

ԽԱՐԱՎՈՎ, Մ. Բ. Ձեռք իբրեւ ուսանողի, բաժա-
նորդարական այն զինամը, որ ինչպիսի էր,
կարելի է անել:

ԿԱՐՍ, Խ. Մառ. Ձեր յոգուածը՝ անկարող ենք
տպագրել:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԵԱՍ ԱՐՄԻՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՐՄԱՋԻԱՐ գիւղի եկեղեցական
ծխական դպրոցում հիմը գնելով գրադա-
րանի, խոնարհարար խնդրում եմ յարգելի
հեղինակներէ, գրողներէ և թարգմանիչ-
ներէ, որ իրանց աշխատութիւններէ մի
մի օրինակ նուիրեն նորակազմ գրադարա-
նին, ուղարկելով հետեւեալ հասցեով.

Башиорашен, (Эрив. губ). Въ селе-
ние Вармазиарь, учителю Антоянцу.
(№ 130) 1—3

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ ՀԱՄԱՐ

Հարկաւոր է մի փորձված

ՀԱՅ ԲԺԻՇԿ

Պայմաններ մասին թող գիտեն գիւղի
տանտէրէին այս հասցեով. Верхне-Акули-
сы. Старшинъ Микаелянцу.
(№ 121) 4—6

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՐ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, վարձարի արձանի հանգիւյ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի
կիրակի օրերից:

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբու-
ժութեան, սիֆիլիս և վնասական հիւանդու-
թիւնների:

Դ. Գ. ՉԻԿԱՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին
և ներքային:

Կին բժիշկ՝ Ա. Ի. ՍՈՐՈԿԻՆԱ ՇՁԵՐԻՆԻՆԱ—
10—11 ժ. կանանց և շնչառի:

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻԶ—12—1 ժ. ակնաչի, կո-
կորդի, քթի և կրծքի: Երկուշաբթի, չորեքշաբ-
թի և ուրբաթ:

Ա. Մ. ՓՈԽԳԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, կրե-
կայոց և ներքային: Երեքշաբթի, հինգշաբթի
և շաբաթ:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և երե-
կայոց:

ԵՐԵՎԱՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻԶ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շա-
բաթ:

Ա. Մ. ՓՈԽԳԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի,
չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. Սիֆիլիսի, մզի և
սեռական օրգանների հ. ներքին և արտին:

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—6 1/2—7 ժ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմիական և խոշորացրեցական
հետազոտութիւններ է անում մզի, խիւի, ա-
րեան, կաթի և այլն:

Վճար 50 Կ. Համախորհրդի (կոնսիլիումի) և
օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ.

„ՏԱՐԱՋ“

ՊԱՏԿԵՐԱՋԱՐԻ ԾԱՐԱԹԱԹԵՐԹԻՆ

Կարելի է բաժանորդ գրվել նոյեմբերի և
դեկտեմբեր ամիսների համար: Բաժանորդա-
դիրը կրկու ամսվա համար 1 ռուբլի, ճանա-
պարհած ամսվա 5 ռուբլի:

ՏԱՐԱՋԻ իւրաքանչիւր համարում տպագրվում
են 1000-ից ավելի քառակուսի ստանդ. ՊԱՏԿԵՐ-
ՆԵՐ, որոնց թուով կը տպագրվեն ԳԱՐԴԱՍՏՈՆ
ամսականներ, ՍՈՒՐԲԻՆԻ, ՐՕԶՆԵՐԻՆ, ԱՐԳԱՑԻՆ
զաքսի, ՋԷՄՍ ԲՐԱՑՍԻՆ, ԿԻՄԲԵՐԼԵՑԻ, շատ
ԽՄԲԱԳՐՆԵՐԻ, ԳՈՐԾԵՆԵՐԻ, սուլթան ԱԲԴԻՆԻ,
ՀՍՄԻՆԻ, ԵՐ ՎԷՋԻՆԵՐԻ և այլն և այլն
պատկեր:

«Տարադի» խմբագրութեան մէջ ի նրոց են
գրված այդ և ուրիշ շատ պատկերների կէտէ-
ներ, ընդամենը 1645 կտոր: Հետաքրքրուողները
կարող են տեսնել այդ կէտէները և նայալէս
արտասանները ստացված հայերէն նոր տառե-
րի բաղադրան տեսակները, որոնցով «Տարադի»
պիտի շարվի կարճ ժամանակից յետոյ:
Հասցէն՝ Тифлисъ, Редакция «ТАРАДЪ».
(№ 122) 5—5

ԼՈՒՄԱՅ

ԳԱՐՈՒ ԸՆՏԱՆԻՔԸ

ՎԷՊ ԹԻՖԼԻՍԻ ԿԵԱՆՔԻՑ

ԳԻՆԵ Է 60 ԿՈՊ.

Դիմել այս հասցեով՝ Тифлисъ, Типо-
графия Главноначальствующаго, Сергѣю
Назарьянцу. ԹԻՖԼԻՍԻՄ փառաւ փառ է
նաև կենտրոնական և կալիսեան գրա-
վաճառանոցներում: ԲԱՐՈՒ Ժախվում է
Ներքինների գրախանութում:
(№ 64) 4—5

ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱՐԱՆ

ԴՕԿՏ. Ա. ԲԱՐԱՅԵԱՆԻ

Սերգեյեւկայա փողոց № 14.

Ցերեկ 12 1/2—2 ժ. կանայք և մանուկներ:
Երեկոյան 6—7 1/2 ժ. տղաքի:

Ներքին և ջրային հիւանդների համար, բացի
զեղերից, գործարկվում են նաև զանազան տե-
սակ ջրաէլեկտրա բուժական և այլ ֆիզի-
կական մեթոդներ (մասամբ և այլն)
(№ 124) 6—15

„ՄԱՆԳԼԻՍԻ“ եկեղեցական-ծխական
դպրոցին կից ցանկանալով հիմնել ԳՐԱԴԱ-
ՐԱՆ, խոնարհարար խնդրում եմ յարգելի
թարգմանիչներէ, հեղինակներէ և գրող-
ներէ, նուիրել իրանց գրաւածներէ մի-մի
օրինակ: Հասցէն՝ Манглись, учителю
Николаю Давтянъ. (№ 117) 4—6

ՐՕՍՏՈՎԻ ՄԷՋ

Բացվել է ԼՐԱԴԱԿԱՆ ԳՐՈՒԱԿԱԼՈՒԹԻՒՆ և ԳՐԱ-
ՏՈՒՆ: Ընդունվում են գրքեր, օրացույցներ և պատ-
կերների՝ ծախելու համար: Հասցէն՝ РОСТОВЪ (на
Дону) ГАЗЕТНОЕ АГЕНТСТВО.
(№ 100) (շ.) 11—15

ԴՕԿՏՐ ՎԱՀԷ ՄԻՆԱՍԵԱՆ

կը յայտնէ իրան զինով հիւանդներին, թէ
առաջիկայ սեպտեմբերից սկսեալ կը վերա-
հաստատվի ՎԷՆԵՆԱ և իր հասցէն հետե-
ւեալն է.

Dr. WAHE MINASSIAN
Operator an der Klinik des Professor Chro-
bak. VIII. Schlüsselgasse 10.
OESTERREICH WIEN

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

Անդրկովկասեան երկաթուղու վարչութիւնը պրանով յայտնում է, որ վերջին հեղե-
ղից փառած ճանապարհի մի մասում՝ անյորդներ և ապրանքների ժամանակաւոր
երթեւեկութեան վերականգնումը ենթադրվում է զեկտեմբեր ամսի սկզբին, որի մասին
իր ժամանակին կը յայտարարվի:
(№ 128) 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Շաբաթ, նոյեմբերի 11-ին

ԿՕՆՑԵՐՏ

ԲԷԴԵՐ ՔՈՅՐԵՐԻ

Բողալիս—Փորտեպիանո, Սոֆիա—Ջութակ, Լոյա—ալտո, Լիլիա—վիոլոնչէլ:
Տօմաշևսկի և Գրոզմանսկի կարելի է ստանալ ՄԻԿԻՄԱՆԵԱՆԻ Երաժշտական դէպոստ,
Խիւրջովայա փողոց:
(№ 129) 3—3

ԿՐԱԿԻ ԴԷՄ ՓՈԽԱԴԱՐՋ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Ապահովագրում է ամեն տեսակ շինութիւններ Թիֆլիս քաղաքի մէջ

ՏԵԼԵՖՈՆ № 288

Վարչութիւնը գտնվում է քաղաքային տանը, Երևանեան հրապարակի վրա, և բաց
է առաւօտեան 9 ժամից մինչև 2 1/2-ը կէս օրից յետոյ:

Մուտքը վճիռաձեովակայա փողոցից, քաղաքային դռմայի պողէզով:
(№ 90) (շ.) 11—20

ԼԱՋԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵՋՈՒԱՅ ՄՕՍԿՎԱ

Հանդուրեալ պետական խորհրդական ԳԱՆԻԷԼ ԳԱՐԻԵԼԵԱՆ ԲԱՆԱՆԵԱՆԻ Բարձ-
րագոյն հաստատված մրցանակի ներքո.

„ՀԱՅԵՐԸ ԲԻՆԱՐԱՆԻՍՏՈՒՆ“ ՄԻՆԵՆԻ ԽԱՋԱԿՐԱՅ ԱՐՇԱՆԱՆԻՔԸ“ (մանուսկր ԲԻՆ-
դանդական աղբիւրների հիմամբ):

Շարադրութիւնը կարող է ներկայացվել հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն կամ
գերմաներէն:

Շարադրութիւնը պէտք է ներկայացվի ոչ ուշ քան 1-ին յունվարի 1898 թ.:
Լաւագոյն շարադրութիւնը յիշեալ նիւթի մասին կը պարգևատրվի խորհրդա-
րանի կողմից եօթն հարիւր ռուբլի մրցանակով:

Վերատեսուչ ձեռնարանի՝ Գ. Բանանեան
Քարտուղար խորհրդարանի՝ Գ. Խալախեանց
3—5 (№ 128)

ՕԺԻՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա Ղ Ջ Կ Ե Ր Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԹԻՆ Է 23,000,000 ՐՈՒԲԼԻ:
Ընկերութեան տոկոսարի թղթերը պահվում են պետական բանկում:

Ծնողներին, խնամատարներին և սոհասարակ այն անձանց, որոնք
ցանկանում են ապահովացնել աղջկանց ապագան, „ՐՕՍՍԻԱ“ ընկերու-
թիւնը առաջարկում է ՕԺԻՏԻ (բաժինը) ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ:

Օրինակ, եթէ ցանկանում են կրկու ամեայ աղջկայ համար ապա-
հովանել 5000 ՐՈՒԲԼԻ ՕԺԻՏ, այնպէս որ, 18 ՏԱՐԵԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ
ստանան այդ գումարը, (այսինքն 16 տարուց յետոյ), այն ժամանակ
այդ տեսակ ապահովագրութեան համար ապահովագրողը „Ր.Ս.ԿԻ“
ընկերութեանը պիտի վճարի ամեն 3 ամիսից յետոյ 52 Րուբլի:

Սոյնանան ապահովագրութիւններ կարելի է կայացնել նաև այն
պայմանով, որ ապահովագրողին անմիջապէս վերադարձվին բոլոր իր
վճարած տուրքերը (պրէմիաները), եթէ միայն ապահովագրված երե-
կան վախճանվի պայմանաւորեալ ժամանակից առաջ:

1895 թ. յունվարի 1-ին „ՐՕՍՍԻԱ“ ընկերութեան մէջ ապա-
հովագրված էին 31,701 անձինք 83,708,760 Րուբլի գրամաղկով:

Տղայ երեխաների համար ևս կարելի է ապահովացնել գրա-
մաղկու և նոյն կերպով, ինչպէս աղջկանց, և այդ դրամաղկու կը
ստացվի իրեն թողակ (պէսիրա) ԿՐՈՒԹԻՒՆԸ ԾԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ համար,
եթէ միայն ապահովագրած երեխան կապրի մինչ պայմանաւորեալ ժա-
մանակամիջոցը:

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում
են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Վարչութեանը
Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37),
կովկասեան շրջանի համար ընկերութեան Վարչութեան մէջ, որ գտնու-
վում է՝

ԹԻՖԼԻՍԻՄ, Սերգեյեւկայա փ. տ. № 6. (երկրորդ յարկում) և
բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում:
(№ 71) (շ.) 10—52